ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<26>> մարտի 2026թ. N ՄՊ/169-Ա

ք. Արմավիր

## «ԹԱИՐՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ԲԱՂՈՒՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունվարի 29-ի N109-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մարինե Բաղումյանի 2026 թվականի մարտի 25-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Բաղումյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը 2026 թվականի ապրիլի 3-ից 18-ը ներառյալ՝ 12 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մարինե Բաղումյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Թաիրովի միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Սաթենիկ Պետրոսյանին:

3. «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Սաթենիկ Պետրոսյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի ապրիլի 3-ից 18-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մարինե Բաղումյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի ապրիլի 20-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**